ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"11" ապրիլի 2011թ № 64 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 50 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՅԱՄԲ «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 91-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մայիսի 19-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների /վերստուգողների/ ձևավորումը և գործունեությունը կանոնակարգելու մասին» N 1187-Ն որոշման 2-րդ կետի բ/ ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. մայիսի 3-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների անդամների /վերստուգողների/ ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման կարգն ու մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները /չափանիշները/ հաստատելու մասին» N 478-Ն հրամանով հաստատված կարգի, ՀՀ Սյունիքի մարզպետի 2008թ. փետրվարի 4-ի «ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական առողջապահական ընկերությունների վերստուգողների ընտրությունը մրցութային կարգով անցկացնելու մասին» N 5-Ա որոշման պահանջների,

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ «Կապանի բժշկական կենտրոն», «Գորիսի բժշկական կենտրոն» և «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգողների 2011թ. ապրիլի 11-ին կայանալիք ընտրության մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Մարդյան Աշոտ	-	ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Ծատրյան Աշոտ	-	առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

		հանձնաժողովի նախագահի տեղակալ
Դավթյան Սուսաննա	-	ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Կոզմանով Կառլեն	-	իրավաբանական բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Հովհաննիսյան Անահիտ	-	անձնակազմի կառավարման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Վեզիրյան Սուրիկ	-	գլխավոր աուդիտոր, հանձնաժողովի անդամ

2. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. ապրիլի 11
ք. Կապան